Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 21 հունվար 2022թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, կայացել է՝ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արմեն Հովհաննիսյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը

Կողմ 8, Դեմ 1

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանը քվեարկել է դեմ և ներկայացրել է հետևյալ դիտարկումը՝

1. Հաշվետվությունը կազմված է թերություններով և չի պարունակում մի շարք առանցքային հարցերի մասին ամբողջական տեղեկատվություն,
2. Հաշվետվության մեջ առանձին բաժիններով ներկայացված են տեսչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտերի վարչական և դատական կարգով բողոքարկումների վերաբերյալ քանակական տվյալներ, ինչպես նաև արդյունքներ,
3. Հաշվետվության նախագծից պարզ է, որ վարչական կարգով բերված բողոքների միայն շատ չնչին մասն է բավարարվում: Միաժամանակ, դատական կարգով բողոքարկված ակտերի մասով, ակնհայտ է, որ դատարան ներկայացված հայցադիմումների բավականին զգալի մասը բավարարվում է, և վարչական ակտերը անվավեր են ճանաչվում,
4. Անհրաժեշտ է հաշվետվության մեջ ներառել համապատասխան վերլուծություն կապված նրա հետ, թե դատարանի կողմից վարչական ակտերն անվավեր ճանաչելու հիմքերը որոնք են եղել, և արդյոք այդ ակտերի օրինականության հարցը քննարկման առարկա դարձված է եղել վարչական կարգով բողոքարկման շրջանակներում, թե ոչ,
5. Միաժամանակ, հաշվետվության մեջ որևէ նշում չի պարունկավում այն մասին, թե տեսչական մարմինը ինչ միջոցներ է ձեռնարկել դատարանների համապատասխան

որոշումներով արձանագրված՝ սխալների ուղղման, դրանց կրկնությունը կանխելու ուղղությամբ,

6. Հաշվետվության բովանդակությունից այնպիսի տպավորություն է, որ տեսչական մարմնի կողմից դատական ակտերը որևէ վերլուծության առարկա չեն դարձվում և համապատասխան հետևություններ չեն արվում:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ Գևորգ Բալումյանը քվեարկել է կողմ և ներկայացրել է հետևյալ դիտարկումը՝

1. Հաշվետվությունը կազմված է թերություններով և կա պարզաբանումների ու ճշտումների անհրաժեշտություն,
2. ԿԽ-ի նիստերի անցկացման այս ձևաչափը հնարավորություն չի ընձեռում ստանալ անհրաժեշտ պատասխաններ: Բացառապես հնարավոր չէ գնահատել և տեսչական մարմնի և անգամ ԿԽ-ի աշխատանքի արդյունավետությունը:
3. Առաջարկում եմ քննարկել այսպիսի ձևաչափով ԿԽ-ի աշխատանքի նպատակահարմարությունը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետի պարտականությունները կատարող
(խորհրդի քարտուղար) _____Հ. Սիրունյան